ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 18.07.2019թ. ԹԻՎ 603-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ — 29. 07. 2019 թ.
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) — ժամը 12:00

**Հանձնաժողովի նախագահ**
Լ. Սարգսյան — Դիտարկման ծառ. պետ
**Հանձնաժողովի բացող անդամներ**
Ա. Աղաջանյան — Բազմադիտարկման դիտարկման համակարգի կենտրոնի ավագ ինժեներ
Տ. Ղուկասյան — Ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի առաջատար ինժեներ
**Հանձնաժողովի գնահատող անդամներ**
Ա. Կարապետյան — Ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի ղեկավար
Գ. Մանուչարյան — ԾԱԾԾ բաժնի առաջատար ինժեներ
**Հանձնաժողովի քարտուղար**
Անահիտ Կարապետյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/19 ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդարար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը

1. <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ.

Հանձնաժողովի նախագահ Լ. Սարգսյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված - 412 900 ՀՀ դրամ, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ- 240 000ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով պահանջվել էր լիցենզիա՝ քաղաքաշինության բնագավառում հսկողության իրականացում քաղ բնակելի, հասարակական և արտադրական օբյեկտների, սակայն մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում էր նշված լիցենզիան:

Համաձայն սույն ընթացակարգի 1-ին մասի 7.9 կետի

**Հանձնաժողովը որոշեց**

1. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել պահանջվող լիցենզիան:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 31.07.2019թ. ժամը 15.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ ընկերությունում:

Լ. Սարգսյան

Ա. Աղաջանյան

Տ. Ղուկասյան

Ա. Կարապետյան

Գ. Մանուչարյան

Հ. Հակոբյան